



ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ հոգեբուժական հաստատություններում
անձնական հիգիենայի ապահովումը



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերնագիր	ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը
Ծրագիր	ՀՀ հոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների իրացման խթանում
Ձեկույցի հեղինակներ	Մարիետա Թեմուրյան Սառա Ղազարյան
Խմբի՝ այց կատարած անդամներ	Արթուր Սաքունց՝ Խմբի նախագահ <i>Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ</i> Սյուզաննա Գրիգորյան <i>Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ</i> Մարիետա Թեմուրյան <i>Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ</i> Արմինե Կարապետյան <i>Իրական աշխարհ, իրական մարդիկ</i> Արմինե Հարությունյան <i>Կանանց ներուժի զարգացման կենտրոն</i> Էլեն Մկրտչյան <i>Հանուն հավասար իրավունքների</i> <i>Տաթևիկ Նալբանդյան</i> <i>Իրական աշխարհ, իրական մարդիկ</i> Սառա Ղազարյան <i>Կանանց իրավունքների տուն</i> Վաղինակ Տեր-Հովհաննիսյան <i>Մարդու իրավունքների տուն Երևան</i>

Հաստատություններ

- «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
- «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
- «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
- «Ակադեմիկոս Ա. Չայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ
- «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
- «Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսեր» ՊՓԲԸ
- «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ

Ձեկույցը պատրաստվել է Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

Ձեկույցում արտահայտված տեսակետների, եզրահանգումների համար պատասխանատվություն է կրում Դիտորդական խումբը, և հնարավոր է դրանք չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ	4
Ամփոփագիր	5
Ներածություն	8
Մեթոդաբանություն	9
Հաստատությունների շենքային պայմանները	10
Անձնական տարածք	10
Սանհանգույց	11
Լոգասենյակ	13
Ջրի հասանելիություն	16
Անձնական հիգիենա	17
Ձեռքերի հիգիենա	17
Բերանի խոռոչի խնամք	18
Լոգանքի կազմակերպում	19
Մազերի և եղունգների խնամք	20
Լվացքի կազմակերպում	22
Անձնակազմի դերը	23
Հիգիենայի պարագաներ	24
Հիգիենայի պարագաների գնման ընթացակարգը	24
Հիգիենայի պարագաների տրամադրման ընթացակարգը	25
Եզրակացություն	26
Դիտարկումներ զեկույցի վերաբերյալ	29
Խմբի մասին	43

ԱՄՓՈՓՎԱԳԻՐ

Հիգիենայի կանոնների և միջավայրի մաքրության պատշաճ պահպանումը հիմնարար նշանակություն ունի անձանց առողջության և բարեկեցության համար:

Սույն զեկույցի շրջանակում ուսումնասիրվել են Հայաստանի 7 հոգեբուժական հաստատություններում բուժում և խնամք ստացող անձանց անձնական հիգիենայի ապահովման բաղադրիչները՝ լոգանքի, ձեռքերի հիգիենայի կազմակերպումը, ատամների, մազերի, եղունգների խնամքի ապահովումը, անձնական հիգիենայի ապահովման թերությունները և դրա ապահովման խոչընդոտները:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս անձնակազմի դերի կարևորությունը բուժում և խնամք ստացող անձանց հիգիենայի ապահովման հարցում:


Հաստատություններում բուժում և խնամք ստացող անձանց հիգիենայի պայմանների ապահովման հետ կապված արձանագրված խնդիրներն են՝

- անձնական տարածքի, անձնական իրերը պահելու պայմանների անբավարար ապահովում և/կամ առհասարակ բացակայություն
- անձնական հիգիենայի ապահովման համար անհրաժեշտ
 - տարածքների սանիտարահիգիենիկ ոչ պատշաճ պայմաններ
 - սանտեխնիկայի (ցնցուղ, զուգարանակոնք, լվացարան) և լոգանքի անվտանգ կազմակերպման համար անհրաժեշտ կահավորանքի (աթոռ, չսահող գորգեր) ոչ բավարար քանակ
 - պարագաների (ջամպուն, սափրվելու փրփուր, միջադիր և այլն) ոչ պատշաճ որակ և տրամադրման ընթացակարգ, ոչ բավարար քանակ կամ առհասարակ բացակայություն
- ջրի (հատկապես տաք) անհասանելիություն
- հանդերձանքի, մասնավորապես ներքնազգեստի և զուգագուլպաների անհատական լվացման անհնարինություն
- հիգիենայի կանոնների պատշաճ պահպանման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսի անբավարար քանակ

- գնման ընթացակարգերի օրենսդրական բացեր

Գծապատկեր՝ հիգիենայի պահպանման հիմնական խոչընդոտները

Հիգիենայի պահպանման խոչընդոտները



Հիմնական եզրահանգումները

Հոգեբուժական հաստատություններում, հաշվի առնելով բուժում և խնամք ստացող անձանց թիվը, շենքային պայմանները, անձնակազմի սղությունը և գնման ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների թերությունները, հնարավոր չէ ապահովել անձնական հիգիենայի պահպանման արժանապատիվ պայմաններ:

Առաջարկություններ

Հիմնական առաջարկությունն է ապահովել բարձրորակ, անձակեւտրոն, վերականգնմանը միտված հոգեկան առողջության ծառայություններ, որոնք պաշտպանում և խթանում են մարդու իրավունքները:

Կարճաժամկետ առաջարկություններ.

- ապահովել բուժում և խնամք ստացող անձանց՝ իրենց անձնական իրերը պահելու պատշաճ պայմաններ
- ապահովել սանհանգույցների, լոգասենյակների մաքրությունը
- ապահովել անձնական հիգիենայի պահպանման համար սանտեխնիկայի (ցնցուղ, զուգարանակոնք, լվացարան) և լոգանքի անվտանգ կազմակերպման համար կահավորանքի (աթոռ, չսահող գորգեր) անհրաժեշտ քանակ
- ապահովել անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ պարագաների (շամպուն, սափրվելու փրփուր, միջադիր և այլն) պատշաճ որակը ու քանակը
- ապահովել մշտական տաք և սառը ջրի հասանելիություն
- ապահովել հանդերձանքի, մասնավորապես ներքնազգեստի և զուգագուլպաների առանձին լվացումը և անհատականացումը
- ձևավորել օրենսդրական այնպիսի կարգավորումներ, որոնք կերաշխավորեն որակյալ ապրանքների մատակարարում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Սահմանում

Սույն զեկույցի շրջանակում բուժում և խնամք ստացող անձանց հիգիենան վերաբերում է Նրանց ամենօրյա անձնական հիգիենայի պահպանմանը: Վերջինս ներառում է բերանի խոռոչի, ծեղքերի հիգիենան, լոզանքը, եղունգների, մազերի խնամքը, ինչպես նաև անկողնային պարագաների և հագուստի մաքրությունը:



Հիգիենայի կանոնների պատշաճ երաշխավորումը կարևոր նշանակություն ունի անձանց առողջության պահպանման հարցում, իսկ անձնական հիգիենայի կանոնները հոգեբուժական հաստատություններում բուժում և խնամք ստացող անձանց առողջության պահպանման տեսանկյունից կենսական նշանակություն ունեն: Հիգիենան Նրանց հարմարավետության, արժանապատվության և բարեկեցության ապահովման կարևոր բաղադրիչ է: Բացի դրանից՝ այն ոչ միայն նպաստում է անձի առողջության պահպանմանը, այլև էական դեր է խաղում վարակների տարածումը կանխելու հարցում:

Հայաստանի 7 հոգեբուժական հաստատություններում բուժում և խնամք է ստանում ավելի քան 1100 անձ: Նրանց մի մասին անհրաժեշտ է խնամք և պահպանողական բուժում, մինչդեռ անձինք հաստատություններում են գտնվում մի քանի ամսից մինչև մի քանի տարի: Հոգեբուժական հաստատություններում բուժում և խնամք ստացող անձանց թիվը, այնտեղ գտնվելու տևողությունը, շենքային պայմանները, ինչպես նաև անձնակազմի թվաքանակը բավարար չեն պատշաճ արձագանքելու բուժում և խնամք ստացող անձանց անձնական հիգիենայի պահպանման կարիքներին: Բացի դրանից՝ դիտարկումները ցույց են տալիս, որ հաճախ բուժում և խնամք ստացող անձանց տրամադրված հիգիենիկ

պարագաները չեն օգտագործվում: Անձնակազմի խոսքերով՝ «ցանկություն չունեն օգտագործելու»:

Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձանց հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանված են ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1724-Ն որոշմամբ: Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի N 01-Ն հրամանով:

Մեթոդաբանություն

Ձեկույցի կազմման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք է բերվել հոգեբուժական հաստատություններ Դիտորդական խմբի այցերի միջոցով: Այցերի ընթացքում իրականացվել է տարածքի դիտարկում և հարցազրույցներ Դիտորդական խմբի նախապես մշակած գործիքների կիրառմամբ:

Մասնավորապես հարցազրույցներ են իրականացվել վարչական անձնակազմի, բուժանձնակազմի հետ, առանձնազրույցներ բուժում և խնամք ստացող անձանց հետ:

Դիտարկվել են հաստատությունների շենքային հագեցվածությունը (սանհանգույցները, լոգասենյակները, ջրի հասանելիությունը), անձնական հիգիենայի կանոնների պահպանման վիճակը (ձեռքերի հիգիենա, լոգանքի, մազերի և եղունգների խնամքի, հագուստի և անկողնային պարագաների լվացման կազմակերպումը), հիգիենիկ պարագաների անհրաժեշտ քանակի առկայությունն ու հասանելիությունը:

Իրականացվել է 7 այց հոգեբուժական 7 հաստատություն: Իրականացվել է բաժանմունքների, սանհանգույցների, պահեստների, տարածքի դիտարկում, 18 հարցազրույց բուժանձնակազմի, 7 հարցազրույց վարչակազմի ներկայացուցիչների և 29 հարցազրույց բուժում և խնամք ստացող անձանց հետ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անձնական տարածք



Հիվանդասենյակը կահավորված է յուրաքանչյուր անձի համար մահճակալով, կողպելու հնարավորությամբ կողապահարանով անձնական իրերը և պարագաները պահելու համար, ինչպես նաև պահարանով կամ հարմարանքով, որտեղ կարող է պահվել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի ճագրատը:

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն հրաման



Հոգեբուժական հաստատություններում շարունակում է խնդրահարույց մնալ գերբնակեցվածությունը: Թեև պահպանված են իրավական ակտերով սահմանված մահճակալային հագեցվածության վերաբերյալ իրավական նորմերը, այնուամենայնիվ ապահովված չեն անհրաժեշտ անձնական տարածք ունենալու նվազագույն չափանիշները: Այդ պատճառով բուժում և խնամք ստացող անձինք զրկված են, ի թիվս այլնի, իրենց անձնական իրերը, այդ թվում հիգիենայի և խնամքի պարագաները, առանձնացված պահելու հնարավորությունից: Նշենք, որ հաստատություններում հիգիենայի պարագաները (զուգարանի թուղթ, օճառ, ատամի մածուկ և ատամի խոզանակ), որպես կանոն, տրամադրվում են անձանց անհատապես, որոնք պետք է պահեն իրենց մոտ: Դիտորդական խմբի կողմից, սակայն, արձանագրվել են կողապահարանների թվի անհամապատասխանություն մահճակալների թվին, մահճակալների խիտ դասավորվածություն սենյակներում, ինչը դժվարեցնում է մուտքն ու ելքը, իսկ հագուստը պահելու համար պահարաններն առհասարակ բացակայում են:

Սանհանգույց



Անձնական կարիքները հոգալու համար սանհանգույցներն առանձնացված են միջնապատերով կամ խցիկներով և ապահովված են զուգարանակոնքերով:

77 առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կենցաղային անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն հրաման



Հոգեբուժական բոլոր հաստատություններն ապահովված են սանհանգույցներով: Որոշ հաստատություններում բացի եվրոպական տիպից տեղադրված են նաև ասիական տիպի զուգարանակոնքեր (տե՛ս Նկար 1): Սանհանգույցները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց: Նշենք, որ Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում և Սևանի հոգեկան առողջության կենտրոնի որոշ բաժանմունքներում տեղադրված են բռնակներ:

Բաժանմունքներում որպես կանոն տեղադրված է 1-3 զուգարանակոնք, իսկ բուժում և խնամք ստացող անձանց թիվը դիտարկման օրերին 7-65 անձ էր: Հոգեբուժական հաստատություններում մեկ զուգարանակոնքից օգտվող անձանց թիվը հասնում էր ընդհուպ 43-ի, մինչդեռ, օրինակ, ԱՄՆ Կոլորադո նահանգի սահմանած չափանիշներով, մեկ զուգարանակոնքը նախատեսված է ոչ ավելի քան 10 մահճակալի հաշվարկով, իսկ Ֆլորիդայի կանոնակարգերով՝ առավելագույնը 4 մահճակալի հաշվարկով:

Խնդիրը էլ ավելի է բարդանում, երբ զուգարանակոնքը խցանվում է: Օրինակ՝ Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում այցի օրը տղամարդկանց համար նախատեսված բոլոր երեք զուգարանակոնքերը խցանված էին և բուժառուները օգտվում էին աշխատակիցների համար նախատեսված զուգարանակոնքից:

Արձանագրվել է նաև զուգարանակոնքերի մաքրության, ինչպես նաև զուգարանից օգտվելիս բուժում և խնամք ստացող անձանց առանձնացվածության

ապահովման խնդիր: Մասնավորապես՝ զուգարանակոնքերն առանձնացված են միայն երեք կողմից (Յոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն և «Ավան» հոգեկան առողջության կենտրոն) կամ առհասարակ առանձնացված չեն (Սևանի հոգեկան առողջության կենտրոն) (տե՛ս Նկար 2, 3, 4): Այսինքն, ապահովված չէ առանձնացված տարածք անձնական կարիքները հոգալու համար:

Ավելին, որպես կանոն, լվացարանները տեղակայված են զուգարանակոնքերի հետ նույն տարածքում: Այսինքն, երեք անձ կարող է օգտվել դուռ չունեցող զուգարանակոնքից և այդ նույն ժամանակ ևս 3 այլ անձ կարող է օգտվել լվացարանից, ինչը չի կարող ընդունելի համարվել անձի արժանապատվության տեսանկյունից:



Նկար 4. Գյումրու հոգեկան առողջության կենտրոն



Նկար 1. «Ավան» հոգեկան առողջության կենտրոն



Նկար 2. Սևանի հոգեկան առողջության կենտրոն



Նկար 3. Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն

Կարող ենք եզրակացնել, որ հոգեբուժական հաստատություններում հնարավոր չէ ապահովել սանհանգույցից արժանապատվորեն օգտվելու և անձնական կարիքները հոգալու անհրաժեշտ պայմանները:

Լոգասենյակ

Հոգեբուժական հաստատությունների բաժանմունքներում հիմնականում հասանելի է մեկ լոգասենյակ մեկ ցնցուղով: Այն հաստատություններում, որտեղ մեկ լոգասենյակում առկա է 2-3 ցնցուղ, դրանք առանձնացված են միջնապատերով, բացառությամբ Սևանի հոգեկան առողջության կենտրոնի: Լոգասենյակներում, բացառությամբ Լոռու մարզային հոգեկարգաբանական դիսպանսերի, որպես աթոռ ծառայում է կամայական աթոռ, որը չի համապատասխանում լոգասենյակային աթոռի նկարագրությանը և, որպես կանոն, հնամաշ է (տե՛ս Նկար 5 և 6):



Նկար 5. Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն



Նկար 6. Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր

Որոշ հաստատություններում լոգանքի հնարավորությունն ապահովված է բաժանմունքի ներսում, որոշներում գործում է բաժանմունքից դուրս առանձին բաղնիք: Օրինակ՝ Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսերում լոգարանը գտնվում է նկուղային հարկում, և բուժում ու խնամք ստացող անձինք լոգանքի համար ստիպված են անցնել արտահիվանդանոցային ծառայության տարածքով:

Սևանի հոգեկան առողջության կենտրոնում բաղնիքը առանձին մասնաշենքում է, ինչը հատկապես ձմռան ամիսներին կարող է անհարմար լինել, այդ թվում՝ նպաստել սեզոնային հիվանդացությանը: Ցնցուղները որևէ կերպ առանձնացված չեն:

Սևանի հոգեկան առողջության կենտրոնում բացի առանձին մասնաշենքում գործող բաղնիքից մասնաշենքերի սանհանգույցներում (բացառությամբ մասնաշենքի, որտեղ այցի օրը Արցախից տեղահանված անձինք էին բուժում և խնամք ստանում) տեղադրված է ցնցուղ, որից օգտվում են այն անձինք, որոնք

դժվարանում են բաժանմունքից դուրս գալ, հաստատության աշխատակիցների խոսքերով՝ «թույլերը»: Ցնցուղներից օգտվում են նաև ըստ անհրաժեշտության:

Դիտորդական խումբն արձանագրել է, որ կանանց բաժանմունքներից մեկում լոգարանի ջրատարը (տրապ) տեղադրված է ցնցուղից հեռու և լոգանքից հետո անհրաժեշտ է օգտագործված ջուրը մեխանիկորեն հեռացնել: Կարող ենք փաստել, որ այս հանգամանքը խոչընդոտում էր տվյալ ցնցուղից օգտվելուն: Ի դեպ լոգանքի հնարավորությունն ապահովվելու համար սանհանգույցը վերանորոգվել է մեկ տարի առաջ և հաստատության վարչակազմը փաստացի ընդունել է խոտանված աշխատանք:

Սևանի հոգեկան առողջության կենտրոնում ուշադրության էր արժանի նաև այն փաստը, որ սանհանգույցներում լոգարանի վարագույրները, որպես կանոն, չեն օգտագործվում (տե՛ս Նկար 7): Աշխատակիցներից ոմանք պարզաբանել են հանգամանքով, որ բուժառուները չեն ամաչում և առանց վարագույրն օգտագործելու են լոգանք ընդունում:

Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսերում լոգարանի վարագույրները մաքուր չէին (տե՛ս Նկար 8):



Նկար 7. Սևանի հոգեկան առողջության կենտրոն



Նկար 8. Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսեր

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հոգեբուժական հաստատությունների լոգասենյակներում ապահովված չեն սանիտարահիգիենիկ պայմանները

(մաքրությունը), դրանք կահավորված չեն անհրաժեշտ գույքով (չսահող գորգեր, լոգասենյակների համար նախատեսված աթոռներ), ինչպես նաև հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Ջրի հասանելիություն



Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հասանելի է խմելու, հոսող տաք և սառը ջրի առկայությունը:

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն հրաման



Հոգեբուժական բոլոր հաստատություններում առկա է մշտական հոսող սառը ջուր: Բուժառուները սովորաբար ջուր վերցնում են սանհանգույցների լվացարաններից:

Ոչ բոլոր հաստատություններն են ապահովված մշտական տաք ջրով և ըստ այդմ լվացվելիս հասանելի է հիմնականում սառը ջուրը, իսկ թեկուզ մասնակի լոգանք ընդունելու հնարավորությամբ բուժում և խնամք ստացող անձինք պատշաճ ապահովված չեն: Օրինակ՝ Լոռու մարզային հոգեևյարդաբանական դիսպանսերում սովորաբար շշերի մեջ տաք ջուր են լցնում և փոխանցում բուժում և խնամք ստացող անձանց: Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում լոգարանում տաք ջրի համար անհրաժեշտ է միացնել ջրի պոմպը: Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում և «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում, մշտական տաք ջուր հասանելի է միայն ձմռան ամիսներին, մյուս ամիսներին տաք ջուր երեկոյան ժամերին չի լինում և այս դեպքում ևս հնարավոր է բուժում և խնամք ստացող անձինք տաք ջուր վերցնեն շշերով ավելի ուշ օգտագործելու նպատակով:

Նշենք, որ պլաստիկ շշերում ջրի անհրաժեշտ ջերմաստիճանի պահպանման ժամկետը կարճ է, ըստ այդմ չի երաշխավորվում, որ օգտագործման պահին ջուրը տաք կլինի:

«Ավան» հոգեկան առողջության կենտրոնում և Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում դիտարկման օրը ոչ բոլոր ծորակներից էր հասանելի նույնիսկ սառը ջուրը:

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻՉԻՆՆԱ

Ձեռքերի հիգիենա



ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ձեռքերի հիգիենան սույն զեկույցի համատեքստում ենթադրում է բուժում և խնամք ստացող անձանց կողմից ձեռքերի ախտահանում նվազագույնն ուտելուց առաջ և հետո, զուգարանից օգտվելուց հետո, ազալուց/փոշտալուց հետո, աղտոտված մակերեսների հետ շփումից հետո:



Ձեռքերի հիգիենան առավել հաճախակի իրականացվող և ըստ այդմ հիգիենայի պահպանման առավել կարևոր բաղադրիչներից է: Ձեռքերի հիգիենայի պահպանումը կարևոր է պաթոգեն բակտերիաների փոխանցման կանխարգելման համար: Ձեռքերը լվանալը ներհիվանդանոցային վարակների կանխարգելման ամենապարզ և արդյունավետ միջոցն է:

Դիտորդական խումբն արձանագրել է, որ թեև որոշ հաստատություններում ճաշելուց առաջ բոլոր բուժում և խնամք ստացող անձանց ձեռքերն ախտահանվում



են սպիրտով, այնուամենայնիվ հնարավոր չէ մշտապես ապահովել և երաշխավորել 50-60 անձի՝ ձեռքի հիգիենայի պատշաճ պահպանումը:

Ակադեմիկոս Ա. Չայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոնում ջրի մատակարարման խափանման դեպքում բուժում և խնամք ստացող անձինք ձեռքերը լվանում են կոտրված, ոչ մաքուր տարայի մեջ հավաքված ջրով, որը այցի օրը կիսադատարկ էր, ջուրն էլ պղտոր (տե՛ս Նկար 9): Ավելին, հասանելի չէր նույնիսկ փոքր չափի տարա ջուր վերցնելու համար:

Նկար 9. Ակադեմիկոս Ա. Չայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն

Բերանի խոռոչի խնամք

2021 թ. Դիտորդական խումբն անդրադարձել էր հոգեբուժական հաստատություններում բերանի խոռոչի խնամքի խնդրին՝ արձանագրելով, որ պատկան մարմինների կողմից պատշաճ կարևորություն չի հատկացվում բուժում և խնամք ստացող անձանց բերանի խոռոչի խնդիրների վերահսկողությանն ու կանխարգելմանը:

Սույն զեկույցի շրջանակում ուսումնասիրվել է բուժում և խնամք ստացող անձանց կողմից մասնավորապես ատամները մաքրելու պրակտիկան: Մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ ատամների մաքրելը հետևողականորեն չի իրականացվում: Արձանագրվել են նույնիսկ դեպքեր, երբ անձանց չի տրամադրվում

ատամի խոզանակ և մածուկ, երբ տրամադրված խոզանակն ու մածուկը փակ դրված են եղել անձանց կողապահարաններում, մինչդեռ բերանի խոռոչի հիգիենայի պահպանումը կարևոր նշանակություն ունի ատամների հնարավոր խնդիրները կանխելու տեսանկյունից:

Լոզանքի կազմակերպում

Կազմակերպությունն ապահովում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի շաբաթական անվազն երկու անգամ, անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ, լողանալու հնարավորությունը:

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն հրաման

Թեև հոգեբուժական բոլոր հաստատություններում բուժում և խնամք ստացող անձինք ապահովված են շաբաթական 1-2 անգամ լողանալու հնարավորությամբ, ընթացակարգերն ու հնարավորությունները տարբեր են:

Օրինակ՝ Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում ջրի ճնշումը չի բավարարում բոլոր ցնցուղների բնականոն աշխատանքի համար: Այդ պատճառով փաստացի օգտագործվում է մեկ ցնցուղ 35 բուժում և խնամք ստացող անձի համար: ՀԱՊԱԿ-ում ընդհուպ մինչև 65 անձի լոզանքը կազմակերպվում է մեկ ցնցուղի պայմաններում:

Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերում լոզանքը, որպես կանոն, կազմակերպվում է աշխատանքային օրվա վերջում, քանի որ, ինչպես նշել էինք, լոզասենյակ հասնելու համար անձինք ստիպված են անցնել արտահիվանդանոցային տարածքով, որտեղ ցերեկային ժամերին այցելուների մշտական շարժ է: Ինչպես նշում են բուժանձնակազմի ներկայացուցիչները.

«տեսնող չի լինի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ավելի հանգիստ կլինեն»:

Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսերում լրգանքը տևում է 5-10 րոպե: Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոնում մեկ ցնցուղից միաժամանակ երեք բուժառու է օգտվում (ընդ որում ընդհանուր 15 րոպե տևողությամբ).

“
«...մինչև մեկն սծառվում է, մյուսը թթջվում է, մյուսն էլ հանվում: Էդպես արագ է և ջուրն էլ բավարարում է»:
”

Մագերի և եղունգների խնամք

“
Կազմակերպությունը, իր միջոցների հաշվին, կազմակերպում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին վարսահարդարման ծառայությունների մատուցումը՝ ամիսն առնվազն մեկ անգամ:
”

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն հրաման

Չոգեբուժական հաստատություններում նախատեսված է մազերը կտրելու և ներկելու հնարավորություն:

Այնուամենայնիվ, որպես կանոն, հաստատություններում մազերը կտրելու գործառույթը վերապահվում է սանիտարներին, որոնք վարսավիրական արվեստին չեն տիրապետում: Սանիտարների կողմից այդ գործառույթի իրականացումը բացատրվում է նրանով, որ մասնագիտացված վարսավիրները նախատեսված գումարով և սահմանված դրույքաչափով չեն համաձայնում աշխատել: Այս մոտեցումն առավել բացասական է անդրադառնում կանանց վրա, քանի որ նրանց նախասիրությունները հնարավոր չի լինում հաշվի առնել: Ըստ այդմ, որոշ հաստատություններում կանանց մազերը կտրվում են կարճ մազ կտրող սարքով (օրինակ՝ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն): Կանանց մազերը կարճ կտրելու պատճառներից նշվել է հիգիենայի ապահովումը (օրինակ՝ Ակադեմիկոս Ա. Չայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոնում նշել են, որ այդպես հեշտ է պայքարել ոջիլի դեմ և ապահովել մազերի մաքուր լվալը):

Ներկելու հնարավորություն ունեն միայն այն անձինք, որոնք իրենց անձնական միջոցներով են ներկ գնում կամ որոնց հարազատները բերում են, քանի որ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1724-Ն որոշմամբ մազի ներկ նախատեսված չէ հիգիենիկ պարագաների ցանկում:

Եղունգների խնամքը կազմակերպվում է անձնակազմի հսկողության ներքո: Անձը կարող է ինքնուրույն կտրել եղունգները՝ քույր տնտեսուհու ներկայությամբ, իսկ եթե կտրելու համար աջակցության կարիք ունի, կարող է ստանալ այդ աջակցությունը: Հիմնականում եղունգները կտրում են ընդհանուր օգտագործման եղունգկտրիչներով կամ մկրատով, որոնք ախտահանվում են օգտագործումից հետո: Միայն Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում է քույր-տնտեսուհին նշել, որ բոլորին անհատական եղունգկտրիչ է տրամադրվում:

Լվացքի կազմակերպում



Կազմակերպությունն իրականացնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հագուստի և սպիտակեղենի լվացման և պահպանման պատշաճ կազմակերպումը, ներքնաշորերի առանձին լվացումը և անհատականացումը:

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն հրաման



Բոլոր հաստատություններն ապահովված են հագուստի, սրբիչների, անկողնային սպիտակեղենի լվացման հնարավորությամբ: Հիմնականում հաստատություններում գործում է լվացքատուն, իսկ որոշները համագործակցում են մասնագիտացված կազմակերպության հետ: Որոշ դեպքերում բուժում և խնամք ստացող անձինք անձամբ են լվանում իրենց հագուստը (հիմնականում ներքնաշորն ու սրբիչները): Անձինք, որոնք հաստատությունում գտնվելու են կարճաժամկետ և պահպանում են կապը հարազատների հետ, հիմնականում հագուստը և սպիտակեղենն ուղարկում են տուն:

Հաստատությունում հագուստը, սրբիչները, անկողնային սպիտակեղենը, որպես կանոն, փոխվում են շաբաթական մեկ անգամ: Աշխատակիցները նշել են անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ փոխելու մասին:

Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոնում բուժում և խնամք ստացող ոչ բոլոր անձինք են ապահովված երեսի և լոգանքի սրբիչներով: Ընդ որում միայն մի սրբիչով ապահովված անձինք սրբիչի լվացման ժամանակահատվածում առհասարակ զրկված են դրանից:

Լոռու մարզային հոգեկենտրոնային դիսպանսերում ևս երեսի և լոգանքի սրբիչներն առանձնացված չեն, երեսի սրբիչը օգտագործվում է նաև լոգանալիս:

Լվացքի իրականացումն անհատականացված չէ, չի առանձնացվում ու անհատականացվում նույնիսկ ներքնազգեստը: Լավագույն դեպքում այն

առանձնացվում է ըստ բաժանմունքների: Այսինքն բաժանմունքում մեկ անձի հագուստը (այդ թվում՝ ներքնահագուստը) լվացվելուց հետո կարող է ստանալ մեկ այլ անձ:

ԱՆՁՆԱԿԱԳՍԻ ԴԵՐԸ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս բուժում և խնամք ստացող անձանց անձնական հիգիենայի պահպանման հարցում անձնակազմի դերակատարության կարևորությունը: Ընդ որում, անհրաժեշտ է անհատական մոտեցում և յուրաքանչյուր անձին պահանջվող աջակցության ծավալի ճիշտ որոշում:

Անձնակազմի ներգրավվածությունը երաշխավորում է ոչ միայն անձի առողջության և հարմարավետության ապահովումը, այլև հնարավորություն է ընձեռում հետևելու անձի ֆիզիկական վիճակին: Այն է, օրինակ, ժամանակին և ճիշտ նույնականացնել մաշկի ամբողջականության խախտումը (քերծվածքներ, կտրվածքներ և այլն):

Աջակցություն կարող է պահանջվել լոգանք ընդունելիս: Ընդ որում, եթե լոգասենյակում և/կամ անկողնում ինքնախնամքի կարողություն ունեցող անձանց անհրաժեշտ է նվազագույն աջակցություն (օր՝ ապահովել հարմարավետ ջերմաստիճան սենյակում, լոգանքի պարագաների հասանելիություն, ջրի պատշաճ ճնշում, երաշխավորել մեկուսանալու պայմաններ, աջակցել խնդրանքի դեպքում և այլն), ապա անկողնային և/կամ անշարժ անձանց դեպքում պահանջվում է առավելագույն աջակցություն:

Մազերի, եղունգների խնամքի դեպքում նույնպես կարևոր է անձնակազմի ներգրավվածությունը: Մազերի ամենօրյա հարդարումը, եղունգների խնամքը անհրաժեշտ են կանխելու հնարավոր մանրէների և վարակների տարածումը: Եղունգների պարբերաբար զննությունը հնարավորություն է տալիս ժամանակին նույնականացնելու ցանկացած փոփոխություն: Դա հատկապես արդիական է շաքարային դիաբետ ունեցող անձանց պարագայում:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ հոգեբուժական հաստատություններում անձնակազմի քանակը բավարար չէ բաժանմունքում 40-65

անձանց կողմից հիգիենայի կանոնների պատշաճ պահպանման, յուրաքանչյուրին ըստ կարիքի աջակցելու և նրանց հետ անհատապես աշխատելու համար՝ զարգացնելու ինքնախնամքի հմտությունները: Մինչդեռ աջակցության կարիք ունեցող 5-10 անձի դեպքում նման աջակցության երաշխավորելն ավելի իրատեսական է:

ՀԻԳԻԵՆԱՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Հիգիենայի պարագաների գնման ընթացակարգը

Պետական կառույցների կողմից իրենց կարիքների համար գնումներ կատարելու ընթացակարգերը սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Ըստ օրենքի՝ գնում կատարելու ընթացակարգերը չորսն են՝ էլեկտրոնային աճուրդ, մրցույթ, գնանշման հարցում և մեկ անձից գնում: Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ընտրվում է այն մասնակիցը, 1) որը ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, կամ 2) որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է»: Ինչպես նշում են գործարարները և փորձագետները՝ չնայած օրենքով ամրագրված դրույթներին՝ պետական մարմինները հիմնականում ընտրում են «ցածր գին» տարբերակը:

Այս խնդիրն է արձանագրվել նաև հոգեբուժական հաստատություններում: Դիտարկումները, բուժում և խնամք ստացող անձանց հետ հարցազրույցները փաստում են անձնական հիգիենայի ոչ պատշաճ որակի մասին (օր՝ բարակ միջադիրներ, մեկանգամյա օգտագործման անորակ ածելիներ), ինչն էլ պայմանավորված է ցածր գնին առաջնահերթություն տալու պահանջով:

Արձանագրվել է նաև անձնական հիգիենայի պարագաների և հանդերձանքի բացակայություն՝ պայմանավորված ֆինանսական անբավարար միջոցներով: Օրինակ՝ ատամի խոզանակը տրամադրվում է միայն այն դեպքում, եթե հաստատությունը ստանում է այն որպես նվիրատվություն/օգնություն, բաժանմունքին տրամադրվում է ընդհանուր օգտագործման սանր:

Ավելին՝ հիգիենայի պարագաների չափաբաժինը կանոնակարգող որոշմամբ նախատեսված է, օրինակ, մեկանգամյա օգտագործման սափրող սարք, սակայն

Նախատեսված չէ սափրվելու փրփուր: Բուժում և խնամք ստացող կանայք մազերը ներկելու համար ներկը ստիպված են գնել անձնական միջոցներից:

Ոչ բոլոր հաստատություններն են ձեռք բերում և երեսի, և լոգանքի սրբիչներ, ինչպես նաև ներքնազգեստ: Ավելին, ներքնազգեստն ու զուգագուլպաները/գուլպաները հաստատությունները հիմնականում ստանում են որպես նվիրատվություն կամ աշխատակիցներն են տանից բերում օգտագործած վիճակում:

Չիզիենայի պարագաների տրամադրման ընթացակարգը

Բուժհաստատություններում հիզիենիկ պարագաների տրամադրումը տարբեր ընթացակարգերով է իրականացվում: Տարբերվում է տրամադրվող պարագաների տեսականին, չափաքանակը, տրամադրման հաճախականությունը որոշ հաստատություններում որոշ պարագաներ տալիս են անհատական սկզբունքով, որոշներում՝ ընդհանուր օգտագործման: Ընդ որում, դիտարկումներն ու հարցազրույցները փաստում են, որ պարագաները տրամադրվում են կամայական ընտրանքով: Որպես կանոն, հաստատություններում անհատական օգտագործման ատամի մածուկ, ատամի խոզանակ, պինդ օճառ և զուգարանի թուղթ է տրամադրվում: Բացառություն է Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերը, որտեղ օճառը, ատամի մածուկը, զուգարանի թուղթը աշխատակցի մոտ է: Զուգարանի թուղթ անհատական չի տրամադրվում նաև Լոռու մարզային հոգեկայարաբանական դիսպանսերում: այն ամեն օր կտորներով են տալիս բուժում և խնամք ստացող անձանց՝ խուսափելու համար զուգարանի թուղթը, օրինակ, զուգարանակոնք գցելուց: Առհասարակ սանհանգույցներում հիզիենայի պարագաների (հեղուկ կամ պինդ օճառ, զուգարանի թուղթ, շամպուն և այլն) բացակայությունը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ բուժում և խնամք ստացող անձինք կարող են դրանով վնասել իրենց կամ փչացնել ապրանքը:

Արձանագրվել է որոշ պարագաների, մասնավորապես միջադիրների, անբավարար քանակ: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ բուժում և խնամք ստացող անձինք, օրինակ, չեն ունեցել երեսի սրբիչ:

ԵԳՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հոգեբուժական հաստատություններում ապահովված չեն բուժում և խնամք ստացող անձանց հիգիենայի պահպանման համար պատշաճ պայմաններ: Թեև բոլոր հաստատություններում առկա են սանհանգույցներ, ցնցուղներ և լվացարաններ, այնուամենայնիվ դրանցում հիմնականում պահպանված չեն անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները, դրանք հարմարեցված չեն ինքնախնամքը և/կամ անձնական հիգիենայի կարիքներն արժանապատիվ, առանց այլ բուժում և խնամք ստացող անձանց ներկայության հոգալուն: Հաստատություններում մասնավորապես արձանագրվել են ոչ մաքուր զուգարանակոնքեր, սանհանգույցների հատակներ (որոշ տեղերում տիղմապատ):

Հատկանշական է, որ որոշ հաստատություններում հիգիենիկ պարագաները տուփերով՝ առանց բացելու պահվում էին բուժում և խնամք ստացող անձանց կողապահարաններում: Աշխատողները դա բացատրում էին այն փաստով, որ բուժում և խնամք ստացող անձինք չեն ցանկանում օգտագործել:

Ակնհայտ է, որ հաստատություններում, որոնցում բուժում և խնամք է ստանում ընդհուպ մինչև 350 և ավել անձ, իրատեսական չէ ապահովել կեցության, հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ արժանապատիվ պայմաններ, հագուստի առանձին լվացումը և անհատականացված բաշխումը, երաշխավորել յուրաքանչյուրի անհատական պահանջմունքներին և կարողություններին համարժեք արձագանք անձնակազմի կողմից, մինչդեռ իրավունքահեն մոտեցմամբ ներդրված ծառայությունների դեպքում դա երաշխավորելն իրատեսական է:

Գնման ընթացակարգի օրենսդրական կարգավորումները, իրենց հերթին, անհրատեսական են դարձնում որակյալ և անհրաժեշտ քանակի հիգիենայի պարագաների ձեռքբերումը:

2021 թ.-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հրապարակել է *Ուղեցույց հոգեկան առողջության համայնքային ծառայությունների վերաբերյալ. Անձակենտրոն և իրավունքների վրա հիմնված մոտեցումների*

խթանումը հրապարակումների շարք, որը տեղեկատվություն և աջակցություն է տրամադրում բոլոր շահագրգիռ կողմերին, որոնք ցանկանում են զարգացնել կամ վերափոխել հոգեկան առողջության համակարգը և ծառայությունները՝ համապատասխանեցնելով մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ կոնվենցիային: Հրապարակումների շարքը, ի թիվս այլնի, ներառում է նաև Հոգեկան առողջության հիվանդանոցային ծառայությունների վերաբերյալ ուղեցույց: Ուղեցույցում ընդգծվում է հոգեբուժական հաստատություններից համայնքային ծառայությունների օգտին հրաժարվելու կարևորությունը, իսկ ներկայացված հիվանդանոցային ծառայություններում շեշտադրված են մարդու իրավունքները, հարկադրանքի բացառումը և դրանք ներառում են փոխօգնության հնարավորությունը, վերականգնման և վերասոցիալականացման պարտադիր բաղադրիչները:

Առաջարկություններ`

Հիմնական առաջարկությունն է ապահովել բարձրորակ, անձակենտրոն, վերականգնմանը միտված հոգեկան առողջության ծառայություններ, որոնք պաշտպանում և խթանում են մարդու իրավունքները:

Կարճաժամկետ առաջարկություններ.

- ապահովել բուժում և խնամք ստացող անձանց անձնական իրերը պահելու պատշաճ պայմաններ
- ապահովել սանհանգույցների, լոգասենյակների մաքրություն
- ապահովել անձնական հիգիենայի պահպանման համար սանտեխնիկայի (ցնցուղ, զուգարանակոնք, լվացարան) և լոգանքի անվտանգ կազմակերպման համար կահավորանքի (աթոռ, չսահող գորգեր) անհրաժեշտ քանակ
- ապահովել անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ պարագաների (ջամպոն, սափրվելու փրփուր, միջադիր և այլն) պատշաճ որակ ու քանակ
- ապահովել մշտական տաք և սառը ջրի հասանելիություն
- ապահովել հանդերձանքի, մասնավորապես ներքնազգեստի և զուգագուլպաների առանձին լվացումը և անհատականացումը
- ձևավորել օրենսդրական այնպիսի կարգավորումներ, որոնք կերաշխավորեն որակյալ ապրանքների մատակարարում:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԶԵԿՈՒՅՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ առողջապահության նախարարություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռ N _____
N _____

ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ձեր 11.07.2024թ. գրության վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

«ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը» զեկույցի նախագիծը ներկայացվել է կարծիքի հոգեբուժական կազմակերպությունների տնօրեններին, որի կապակցությամբ կից ներկայացվում են տնօրենների կողմից ստացված գրությունները:

Հայտնում եմ նաև, որ 2024թ. հունիսի 1-ից ուժի մեջ է մտել Առողջապահության նախարարի 2023թ. հոկտեմբերի 3-ի «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջներ» ՍԿ N 3.1.1-002-23 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին» N 46-Ն հրամանը, որը հնարավորություն կտա ապահովել անձնական հիգիենայի կանոնների պատշաճ պահպանումը:

Միաժամանակ հայտնում եմ, որ պետական գնումներին առնչվող կարգավորումների համար լիազոր մարմին հանդիսանում է Ֆինանսների նախարարությունը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԻՆԵ ԱՎՈՅԱՆ

Invalid signature

X

ԱՐՄԻՆԵ ԱՎՈՅԱՆ

Signed by: AVOYAN ARMINE 5109850453

Կատարող՝ Արմինե Ավոյան
Հիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժին
Հեռ.՝ 060-80-80-03 (1204)



Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ info@moh.am

Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK REGION
GYUMRI PSYCHOLOGICAL
HEALTH CENTER LTD

Հայաստանի Հանրապետություն,
Քաղաք Գյումրի Ղարսի խճուղի 2ա
Հեռ. 5 - 04 - 28
Էլ. փոստ hakgyumri@mail.ru

N 183
12 07 2024թ.

ՀՀ Առողջապահության նախարարության
գլխավոր քարտուղար՝ Վ. Գրիգորյանին

Հարգելի տիկին Գրիգորյան

«Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործություն) նկատմամբ հասարակական դիտորդների խմբի նախագահ Ա Սաքունցի կողմից ներկայացված «ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը» զեկույցի նախագծի վերաբերյալ ներկայացնում եմ.

Գյումրու Հոգեկան առողջության կենտրոնը հնարավորինս քայլեր է ձեռնարկել նշված զեկույցի շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման համար :

Սակայն, շատ խնդիրներ շաղկապված են Գյումրու Հոգեկան առողջության կենտրոնի շենքի անհարմարության հետ (խիտ բնակեցում, կողապահարանների և անձնական հագուստի պահարանների բացակայություն, հարմարավետ ծխարանի, հանգստի սենյակի, տեսակցության սենյակի բացակայություն, որի արմատական լուծման վերաբերյալ՝ (նոր շենքի կառուցում) բազմիցս դիմել ենք վերադաս կառույցներին:



Ս. Բաղդասարյան

Ն Բաղդասարյան

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

§ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ|

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն 0071
Ք. Երևան, Նուբարաշեն 1/3

Հեռ (010) 47 - 53 - 22
Էլ. Հասցե hapak.nubarashen@moh.am

№ 123224 15.07.2024թ.

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան,

ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն մանրամասն ուսումնասիրել է «Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող դիտորդների խմբի զեկույցը և հայտնում ենք, որ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում արձանագրված է, որ զուգարանակոնքերն առանձնացված են միայն երեք կողմից և դուռ չունեն, ինչը վերանորոգումից հետո ամբողջությամբ կվերանա:



ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարող՝
Ա. Բալասանյան
(010) 47-53-22

«ՀՀ Լոռու մարզային հոգեկյարգաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՐԻ ԵՄՔԱՅԻՆ
ՀՈԳԵԿՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԴԻՍՊԱՆՍԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЛОРИЙСКИЙ ОБЛАСТНОЙ
ПСИХОНЕВРОЛОГИЧЕСКИЙ
ДИСПАНСЕР
ГОСУДАРСТВЕННОЕ ЗАКРЫТОЕ
АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

ՀՀ ք.Վանաձոր, Եղեգի 57
հեռ. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

РА г.Ванадзор ул.Нждеа 57
тел. /322/ 2-01-88, 2-41-63

« 12 » 07 2024 թ.

No 01/1015

ՀՀ առողջապահության նախարարության
զխավոր քարտուղար Վ.Գրիգորյանին

ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ի պատասխան Ձեր 10.07.2024թ. թիվ ՎԳ/02.1/20240-2024 գրության հայտնում եմ, որ հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների /ներառյալ՝ անգործության/ նկատմամբ հսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Ս.Մաքունցի կողմից ներկայացված «ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը» զեկույցի նախագծով Լոռու մարզային հոգեկյարգաբանական դիսպանսերում արձանագրված խախտումների մի մասը ներկայումս վերացված է, մի մասը գտնվում է վերացման փուլում, իսկ մնացածը վերացնել հնարավոր չէ՝ ելնելով դիսպանսերի շենքային ներկա պայմաններից:

Մասնավորապես հիվանդանոցային բաժանմունքում բուժում ստացող յուրաքանչյուր անձ ապահովված է կողպելու հնարավորությամբ կողպապահարանով, նրանց տրամադրվում են անձնական հիգիենայի անհրաժեշտ բոլոր պարագաները /օձառ, աստամի մածուկ և խոզանակ, զուգարանի թուղթ, երեսաբքիչ և լոզանքի սրբիչ/:

Հիվանդանոցային բաժանմունքի թե կանանց և թե տղամարդկանց մասնաբաժիններն ապահովված են հոսող մշտական սառը ջրով, կանանց մասնաբաժինն ապահովված է նաև շուրջօրյա տաք ջրով: Աշխատանքներ են իրականացվում տղամարդկանց մասնաբաժինը նույնպես շուրջօրյա տաք ջրով ապահովելու ուղղությամբ:

Դիսպանսերի շենքի նախագծմամբ նախատեսվել է, որ հիվանդանոցային բուժում ստացող անձանց համար նախատեսված լոգարանը պետք է տեղակայվի շենքի կիսանկուղային հարկում: Լոգարանի և լվացքատան վերանորոգման աշխատանքներն իրականացվել են 2012թ.-ին՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի օժանդակությամբ:

Ցավոք, դիսպանսերի շենքային պայմանները թույլ չեն տալիս լոգարանը տեղափոխել հիվանդանոցային բաժանմունք:

Դիսպանսերի տնօրեն Դ.Ա.Ղուլիջանյան/





“Սյունիքի Մարզային Նյարդահոգեբուժական Դիսպանսեր” ՓԲԸ
 RA “Syuniki Marzain Nyardahogebujakan Dispanser” CJSC
 РА ЗАО "Сюники Марзаин Нярдаогебужакан Диспансер"

✉ 22, Սյունիքի մարզ, ք. Գապան, Բաղաբերդ 48, 3307
 ✉ Str. Baghaberd 48, Karan, Armenia, 3307
 ✉ Республика Армения, г. Каран, ул. Багаберд 48, 3307
 e-mail: srpdisp@yahoo.com , srpdisp@mail.ru

☎ +374 285 5-37-12, 5-44-45, +374 91 20-83-25
 ☎ +374 285 5-37-12, 5-44-45, +374 91 20-83-25
 ☎ +374 285 5-37-12, 5-44-45, +374 91 20-83-25
 www.syunikpsychdisp.am , Skype-syunikpsychdisp

Հ/Հ 16022457801500
 ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ
 Կապան մասնաճյուղ
 ՀՎՀՀ 09407988

թ. 517 15 հուլիսի 2024թ.

ՀՀ առողջապահության նախարարության
 գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանին

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 10.07.2024 թ ՎԳ/02.1/20240-2024 գրության, կապված դիտորդական խմբի նախագահ Ա. Սաքունցի կողմից ներկայացված "ՀՀ հոգեբուժական կազմակերպություններում անձնական հիգիենայի ապահովումը" զեկույցի նախագծին ներկայացնելու հայտնելու հետ, հայտնում եմ.

այն, ինչ վեր են հանվում տարբեր իրավապաշտպանների կողմից որպես թերացումներ կամ անբավարարություն, լինի դա Հելսինկյան անսամբլեայի Վանաձորի գրասենյակի, թե մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից, բազմիցս է ենթարկվել վերլուծության և տվել ենք համապատասխան տեղեկատվություն: Սակայն, համակարգային մոտեցում պետության կողմից դեռ չենք տեսնում: Առաջարկում եմ, որ նախարարությունում ստեղծվի մեկ աշխատանքային խումբ, օղակ, որը կգույքագրի բոլոր հոգեբուժարաններում առկա խնդիրները և այդ հոգեբուժական կազմակերպության և նրա հիմնադրի (մեր, Վանաձորի և Գյումրիի հոգեբուժարանների հիմնադիրները մարզպետարաններն են) հետ կատարվեն վերլուծություններ, միասին կազմվեն նշված թերությունների վերացման աշխատանքային պլան և միասնական, թե նախարարության, թե հիմնադրի վերահսկողությամբ ու աջակցությամբ ժամանակի ընթացքում վերացվեն թերությունները: Այլապես այնպես է ստացվել, որ մենք ներկայացնում ենք թերությունների պատճառները, հնարավորինս կարգավորում ենք դրանցից որոշները, բայց համակարգային, պետական միասնական մոտեցում և մասնակցություն չկա: Նույնիսկ այն հարցերին, որոնց վերաբերյալ տվել ենք ծավալուն, մանրակրկիտ վերլուծություն, դրանք տրամադրել հիմնադրին ու նախարարությանը, հետադարձ արձագանք չենք ստացել, այդ հարցերն ամեն տարի կրկնվում են: Ստորև ներկայացնում եմ Ա. Սաքունցի հարցերի պատասխաններ, հուսալով, որ այս անգամ կցուցաբերվի համակարգային մոտեցում և պետությունը կցուցաբերի էական օգնություն մեզ:

անձնական տարածքի, անձնական իրերը պահելու պայմանների անբավարար ապահովում և/կամ առհասարակ բացակայություն. բազմիցս է բարձրացվել այս հարցը, որ հոգեբուժարանները գերբակեցված են: Մեզ չի տրվել տիպային մասնաշենք, եղած տարածքը անբավարար է: 80 մահճակալ ունեցող ստացիոնարում սրացման պերիոդներում այդ թիվը գերազանցվում է: Հիվանդասենյակներում նեղվածք է, տեղը չի հերիքում բոլոր հիվանդների համար պահարանիկներ ու գարդերոբներ տեղադրելուն: Այնուամենայնիվ, տարեցտարի ձեռք ենք բերում նոր միջոցներ ու հնարավորինս ստեղծում պայմաններ: Անհրաժեշտ է ունենալ նոր տարածքներ: Գրել էի, որ եթե շենքի պատերի կրողունակությունը թույլ տա, լավագույն տարբերակը մեկ հարկ դեպի վեր ավելացնելն է, եթե ոչ, ապա կառուցել մեկ նոր մասնաշենք և քրոնիկ հիվանդներին տեղափոխել այնտեղ: Այս դեպքում կապահովվի և անձնական տարածքի չափը, և կտեղավորվեն անձնական իրերը պահելու միջոցները:

Սանիտարական պայմանների վերաբերյալ նշել ենք, որ անհրաժեշտ է կատարել կապիտալ նորոգում:

Սանտեխնիկայի (ցնցուղ, զուգարանակոնք, վացարան) և լոգանքի անվտանգ կազմակերպման համար անհրաժեշտ կահավորանքի (այթոռ, հակասահող գորգեր) ոչ բավարար քանակ. այս հարցը մեզ մոտ վատ չէ, ունենք միջոցները:

պարագաների (շամպուն, սափրվելու փրփուր, միջադիր և այլն) ոչ պատշաճ որակ և տրամադրման ընթացակարգ, ոչ բավարար քանակ կամ առհասարակ բացակայություն. բոլոր հիվանդներն ունեն իրենց օճառը, անհատական, անվանական պարկեր, որոնցում պահվում են իրենց անձնական ռետինե հողաթափերը, օճառամանը օճառով, լողանալու սպունգը, սափրումն իրականացվում է դիսպանսերի վարսավիրի պարտականություն կատարող սանիտարի կողմից, ով ունի բազմամյա փորձառություն: Պրոֆեսիոնալ վարսավիր գտնել չենք կարողացել:

ջրի (հատկապես տաք) անհասանելիություն. ունենք շուրջօրյա մշտական սառը ջուր, հասանելի դիսպանսերի և բաժանմունքների ամեն հատվածում: Արևային ջրատաքացուցիչ համակարգի շնորհիվ անվճար տաք ջուր ունենք դիսպանսերի 22 հատվածներում, այդ թվում բաժանմունքներում, վացարաններում, բաղնիքում, խոհանոցում, վացքատանը, այլուր: Շատ հատվածներում ունենք նաև էլեկտրական ջրատակառիկներ, որոնք տաք ջուր ունեն ցանկացած անհրաժեշտ ժամանակ: Թե էլեկտրականությամբ և թե գազայրիչով տաք ջուր ունենք բաղնիքում, խոհանոցում, վացքատանը: Մեր պայմանները լավ են, տաք ջուր ունենք 366 օր 24 ժամով:

հանդերձանքի, մասնավորապես ներքնագզեստի և զուգագուլպաների անհատական

վացման անհնարինություն. բաժանմունքներում թե կանայք թե տղամարդիկ ցանկացած ժամանակ կարող են իրենց հագուստները, հատկապես ներքնաշորերը, նասկիները, վերնաշակիկ-տաբատ, այլ, վանալ հենց իրենք, ունենք չորացնելու պայմաններ:

հիգիենայի կանոնների պատշաճ պահպանման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսի

անբավարար քանակ. այո, սա ճիշտ է. մեր սահմանափակ բյուջեն թույլ չի տալիս ունենալ բավարար թվով խնամողներ ստացիոնար բաժանմունքներում: Մեկ մայրապետը (սանիտարկան) չի կարող ահռելի ծանրությունը պատշաճ տանել ու ապահովել բարձր որակի աշխատանք: Անհրաժեշտ է լավացնել ֆինանսավորումը, վերացնել սահմանափակ բյուջեն: Աշխատավարձի ֆոնդը պետք է էապես ավելանա, որպեսզի բարձրանան հենց դրույքաչափերը, որովհետև այսպիսի դրույքաչափի աշխատավարձերով հազիվ թե հրապուրվեն բարոյական, ազնիվ, աշխատունակ անձիք, որպիսիք պետք են հոգեբուժարանին:

գնման ընթացակարգերի օրենսդրական բացեր. մի քանի անգամ շեշտել եմ առկա այլանդակ վիճակը: Գործատուների միության ղեկեզացիայի կազմում ֆինանսների նախարարությունում ներկայացրել եմ խնդիրները, այնտեղից ուղարկվել է մեր նախարարություն, պատասխան եմ ստացել, որ օրենքը այս է, այն է: Ոչ մի կոնկրետ քայլ չի կատարվել խայտառակ վիճակը վերացնելու համար: Հիշեցնեմ. Երևանից մինչև Կապանի բժշկական կենտրոն հեռավորությունը մոտ 335 կմ է, Կապանի ԲԿ-ից մինչև մեր հոգեբուժարանը կազմում է 5,5 կմ: Հայտարարում ենք մրցույթ, Կապանի ԲԿ-ի մրցույթին մասնակցում և նրանց մատակարարում են, մեզ՝ ոչ, ասելով՝ "Ձեր քանակը քիչ է, գումարը քիչ է, չենք մասնակցում": Երևանից մինչև Մեղրի մոտ 400 կմ է: Ճանապարհը, որով անցնում են դեպքի Քաջարան ու Մեղրի, մեր դիսպանսերից ուղիղ գծով հեռու է ընդամենը 60 (վաթսուն) մետր: Մեր քթի տակով անցնում, Քաջարանի և Մեղրիի ԲԿ-ներին մատակարարում են, , բայց հրաժարվում են մեզ մատակարարել ասելով, թե մեր գումարը փոքր է, քանակը քիչ է և չեն մասնակցում մրցույթին: Այն բանից հետո, երբ մեր մրցույթը համարվում է չկայացած, մեր գնումների աշխատակիցը զանգում, նրանց հորդորում է կապել պայմանագիր և մատակարարել, մրցույթից հետո համաձայնվում են և մատակարարում, բայց ավելի բարձր գներով, քան կներկայացնեին մրցույթի ժամանակ: Պետությունը թույլ է տալիս նրանց և նրանք իրենց պահում են քմահաճ՝ "կուզեմ կմասնակցեմ, կուզեմ չեմ մասնակցի": Իսկ պետության սեփականությունը հանդիսացող և պետության պատվերը կատարող, պետության հոգսը թեթևացնող հոգեբուժարանը մնում է լքված և միայնակ, պետությունն այս հարցում խոսք չի ասում, լկտիին չի ստիպում: Այդ ինչպե՞ս է որ նրանք պետության մեջ աշխատում և գումար են վաստակում, հարստանում, բայց պետության բուժփիմնարկի բեռը, այսինքն պետության բեռը չեն ցանկանում թեթևացնել: Կրկնում եմ՝ հենց մեր քթի տակով, 60 մետր հեռավորությամբ անցնում են,

մեր դիսպանսեր չեն ցանկանում մտնել: Սա լիտիություն է և պետությունն է նրանց թույլ տալիս այս: Հիմա կասեք թե պետությունը լծակ չունի... պետությունը չի կարող բիզնեսին հարկադրել ...: Դիշտ չէ, պետությունը լավ էլ կարող է և նախադեպը կա: 19.11.2014 թ.-ին կառավարությունն ընդունել է 1308-Ն որոշումը աշխատատեղերում քվոտաների վերաբերյալ, պարտավորեցնելով, որ բիզնես կազմակերպությունները, կախված աշխատատեղերի քանակից, հաշմանդամների համար որոշակի քանակ աշխատատեղ ապահովեն և չապահովելու դեպքում նրանցից կատարել ֆինանսական մասնահանումներ: Ուրեմն պետությունը կարող է ազդել նաև բիզնեսի վրա: Այս հարցը պետք է շտապ լուծում գտնի, մենք չպետք է մնանք խտրական վերաբերմունքի տակ:

Կարճատև առաջարկությունները քննարկվել են, գնումների ծավալում նախատեսել ենք նոր միջոցներ: Մեր դիսպանսերում հիվանդներն հիմնականում իրենք են օգտվում իրենց անձնական հիգիենայի միջոցներից, նրանք, իսկ ովքեր ի վիճակի չեն, սպասարկվում են աշխատակիցների կողմից:

Եղունգների հիգիենայի պահպանման ուղղությամբ ձևավորել ենք նոր մոտեցում: Այսուհետև բոլոր հիվանդներին կտրամադրվեն անհատական եղունգկտրիչներ, մենք դրանք կներառենք գնումների պլանում: Մազերի խնամքը նորմալ է, բոլորն ունեն անհատական սանրեր: Ձեռք կբերենք նաև մազերի ներկեր:

Այն, որ **շարունակում է խնդրահարույց մնալ գերբնակեցվածությունը**, վաղուց հայտնի է: Պետք է կառուցել նոր մասնաշենք կամ նոր բաժանմունքներ, ավելացնելով նոր հարկ, կազմավորել նոր հերթապահ բուժքրոջ պոստեր: Իրավապաշտպանը պարտադիր է համարում, որ օճառը, զուգարանի թուղթը, ատամի մածուկը պետք է պահպանվեն հիվանդների մոտ: Մենք ևս հայտնում ենք, որ բոլորի հանդեպ նման մոտեցումը ճիշտ չէ: Պահպանված, մաքրասեր, գիտակից հիվանդներին այո, տալիս ենք իրենց, նրանք ճիշտ են օգտագործում դրանք: Բայց հարկադրված ենք եղել որոշներին չտալ, որովհետև ունեցել ենք դեպքեր, երբ հիվանդը օճառ է կերել, ատամի մածուկ կերել, զուգարանակոնքի մեջ նետել դրանք, զուգարանի թուղթ, ստեղծել կոյուղու խցանում: Ամեն տեսակի, ամեն խելքի, ամեն գիտակցության, ամեն տրամադրվածության (այդ թվում քենախնդիր) հիվանդներ ունենում ենք և նրանց այս միջոցները տրամադրում ենք մեր հսկողությամբ, այլապես կունենաք խնդիրներ:

Այն մասին, որ որոշ հոգեբուժարաններում **տեղադրված են նաև ասիական տիպի զուգարանակոնքեր**, պարզ չէ սա իրավապաշտպանը խրախուսում է թե՛ քննադատում: Ունենք և նստելու, և պազելու հնարավորություններով կոնքեր, ընտրությունն ազատ է պացիենտի համար: Ասիական տիպի զուգարանակոնք ունենալը չի հակասում օրենքին: Եթե խոսքն այն մասին է, որ հաշմանդամին պետք է նստովի զուգարանակոնք, դրանք ունենք:

Բերվում է ԱՄՆ օրինակը, **թե 10 պացիենտին հասնում է մեկ զուգարանակոնք, կամ 4 պացիենտին մեկ զուգարանակոնք**: Մենք ամերիկացիներ չենք և մեր կոլտուրան այլ է: Այն բանից հետո, երբ պետությունը մեզ տրամադրի տիպային մասնաշենք համապատասխան նշված նորմատիվներին, երբ այս նորմը լինի օրենքի պահանջ այն ժամանակ առաջ կքաշեք այս հարցը: Մեզ մոտ բոլոր **զուգարանակոնքերի հատվածները փակ են բոլոր կողմերից**, ունեն և դռներ և կողապատեր: Ունենք նաև հաշմանդամների համար հարմարեցված պայմաններ:

Մեր հիմնական բաղնիքում ունենք **երկու ցնցուղ, դրանք առանձնացված են միջնապատերով**: Բացի այդ, առանձին, մետաղական կողապատերով ու դռնով, փակվելու հնարավորությամբ ցնցուղ ունենք նաև կանանց բաժանմունքում, որտեղ նրանք կարող են և լոգանք ընդունել և հիգիենիկ վազում անել, իսկ տղամարդկանց բաժանմունքում տեղադրված ցնցուղը թույլ է տալիս լողանալ կամ մարմնի, ոտքերի լրացուցիչ վազումներ անել: Բաղնիքի վարագույրը նորմալ վիճակում է: Կշտկենք մանր շեղումները: Ունենք հակասահող գորգեր, թույլ հիվանդները, հաշմանդամները ունեն բռնածողերից օգտվելու հնարավորություն լողանալու վայրերում, այն կավելացնենք նաև բաղնիքի նախադռանը:

Ունենք լրացուցիչ **մաքուր տակառներ ջուր պահեստավորելու** համար, ջրանջատումներից առաջ դրանք լցնում և օգտագործում ենք:

Ձեռքերի հիգիենայի վերաբերյալ. հսկվում են բոլոր պացիենտները ճաշարան մտնելու ժամանակ, և մեր տված ճաշերը, և իրենց անձնական ուտելիքները ուտելուց առաջ աշխատակիցների հսկողությամբ լվանում են իրենց ձեռքերը, ունեն իրենք և ձեռքերի-երեսի, նաև բաղնիքի անհատական սրբիչներ: Ընդ որում լվացվելու համար ունենք և պինդ, և հեղուկ օճառներ:


Այն, թե **Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսերում լոգանքը տևում է 5-10 րոպե**, առաջացրել է մեր աշխատակիցների զարմանքը և նրանք համաձայն չեն: Լողը հսկվում է սանիտարի և սանիտարկայի, քույր-տնտեսուհու կողմից, հետևում են, որ բոլոր հիվանդները բավարար մաքրվեն: Մեզ մոտ ջուրն առատ է, տաքացնելու խնդիր չկա, ամռան ամիսներին ցանկացողները լողանում են օրական 2 անգամ:

Մեր դիսպանսերում **մազերը ներկելու ցանկություն** հայտնել են միայն կանայք: Նրանք ունեն այդ հնարավորությունը, ներկը բերել են իրենք: Մենք պարտավոր չենք տրամադրել ներկեր, այն օրենքի պահանջ չէ, մենք կտրամադրենք ներկելու պայմանները:

Իրավապաշտպանը նշում է, որ **լվացքի իրականացումն անհատականացված չէ, չի առանձնացվում ու անհատականացվում նույնիսկ ներքնազգեստը**, որ լավագույն դեպքում այն առանձնացվում է ըստ բաժանմունքների: Այսինքն բաժանմունքում մեկ անձի կրած հագուստը (այդ թվում ներքնահագուստը) լվացվելուց հետո կարող է ստանալ մեկ այլ անձ: Եթե պացիենտը ցանկանում է ունենալ զուտ իրենը, խնդիր չկա, նա ունի այդ պայմանները և հագնելու, և լվանալու, և չորացնելու, և պահելու իր հայացողությամբ: Բայց եթե անձը չունի իրենը կամ **ի վիճակի չէ ինքնուրույն անել այդ, ապա որտե՞ղ է խնդիրը, որ մենք ենք տալիս:** Մենք լվանում ենք, մենք դեզկամերայում ախտահանում ենք, մենք պահպանում ենք պատշաճ ձևով: Իսկ բանակում մի՞թե այսպես չէ: Որտե՞ղ է խնդիրը, մենք պարոն Սաքունցի հետ համաձայն չենք: Թող հիվանդն ունենա իրենը, խնդիր չկա, իսկ ընդհանուր ունենալն ու ընդհանուր սպասարկելը չի արգելվում ոչ մի օրենքով, եթե չեն խախտվում վարակազերծման, վարակի կանխարգելման պայմանները:

Աջակցություն կարող է պահանջվել լոգանք ընդունելիս, ճիշտ է նշում պարոն Սաքունցը: Մենք գթասրտության կազմակերպություն ենք և նման դեպքերում մեր աշխատակիցը (տղամարդկանց համար սանիտարը, կանանց համար սանիտարկան) ոչ միայն օգնում, այլ անհրաժեշտ դեպքերում իրենք են լվանում հիվանդի մարմինը:

Ինչ վերաբերվում է **անորակ ապրանքներ ընդունելուն**, ապա մեր դիսպանսերում գործում է մատակարարվող և սննդի ու դեղորայքի, և այլ, նաև անհատական հիգիենայի միջոցների ընդունման մշտական գործող հանձնաժողով և մատակարարից ընդունվում են ստուգելու միջոցով, վատ ապրանքը չի ընդունվում, ապրանքները համապատասխանեցվում են տեխնիկական բնութագրերին, սահմանված պահանջներին:

ՍՄՆՀԴ ՓԲԸ տնօրեն

Արարատ Վարդանյան

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

15.07.2024թ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԿԻՆ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան Ձեր 09.07.2024թ թիվ ՎԳ/02.1/20240-2024 գրության՝ կապված հոգեբուժական օգնության և սպասարկում իրականացնողների գործողությունների նկատմամբ հասարակական դիտորդների խմբի նախագահ Ա. Սաքունցի կողմից ներկայացված «ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը» զեկույցի նախագծի հետ՝ հայտնում եմ, որ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն ունի տարածքային հոգեբուժական օգնության և սպասարկման 5 կաբինետներ և հիվանդանոցային 8 բաժանմունք՝ 348 մահճակալային ֆոնդով:

Կենտրոնը ապահովված է շուրջօրյա սառը և տաք ջրով:

Կենտրոնը բոլոր բուժառուների համար ձեռք է բերում անձնական հիգիենայի պարագաներ՝ օճառ, շամպուն, ատամի խոզանակ և ատամի մածուկ, հիգիենիկ թուղթ, սրբիչներ, հագուստ՝ այդ թվում ներքնաշորեր, կոշիկներ, հողաթափեր, սպիտակեղեն: Կենտրոնում գործում է լվացքատուն, որն ապահովում է բուժառուների ամբողջ հագուստի, սպիտակեղենի լվացման, չորացման, արդուկման գործընթացը: Ներկայում տարվում են աշխատանքներ՝ ուղղված հագուստի, սպիտակեղենի անհատականացմանը:

Կենտրոնում գործում է խոհանոց, որում պատրաստվում և բուժառուներին է տրվում որակյալ երեք անգամյա սնունդ:

Հասցե՝ ք. Սևան Կարմիր բանակի 68, հեռ. +374 261 2-34-00, էլ. հասցե info@sevanhh.am

Սանհանգույցներում խտրոցների տեղադրման ուղղությամբ նույնպես տարվում են աշխատանքներ:

Նշեմ նաև, որ մեկ նոր բաժանմունք ամբողջովին վերանորոգվել է:

Կատարվում են մշտադիտարկման աշխատանքներ՝ ուղղված բուժառուների հիգիենայի պատշաճ պահպանմանը: Ուսումնասիրելով զեկույցը՝ հետագայում ավելի կբարեփոխվեն բուժառուների կենսապայմանները, շարունակաբար կվերացվեն բոլոր թերությունները:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆԻ ժ/Պ



ԱՐԹՈՒՐ ԽԱՆԱՖՅԱՆ

«Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԱՎԱՆ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ք.Երևան, Ավան, Աճառյան 16րբ. 21, / 012-23-23-23 էլ.հասցեն՝ mpcavanclinic@mail.ru

048/ _____ 122 _____

« 12 » _____ 07 _____ 2024թ.

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՐԴԱՆՈՒՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան Ձեր 09.07.2024թ. թիվ ՎԳ/02.1/20240-2024 գրության՝ կապված հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների նկատմամբ հասարակական դիտորդների խմբի նախագահ Ա.Սաքունցի կողմից ներկայացված «ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը» զեկույցի նախագծի հետ, տեղեկացնում եմ հետևյալը՝

«Ավան» հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իր գործունեությունը իրականացնում է արտահիվանդանոցային՝ մեկ և հիվանդանոցային յոթ բաժանմունքների միջոցով, այդ թվում հիվանդանոցային առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, զորակոչային և մանկական բաժանմունքներ՝ ընդամենը 170 մահճակալային ֆոնդով:

Ընկերությունը ապահովված է շուրջօրյա սառը ջրով: Առկա է անհատական կաթսայատուն, որի միջոցով ապահովվում է ձմեռային ժամանակահատվածում 24 ժամյա, իսկ ամառային ժամանակահատվածում ցերեկային ժամերի տաք ջուրը: Բացի կաթսայատնից առկա է նաև այլընտրանքային տաք ջրի ապահովվածություն ընկերության ընդունարանում, որը գործում է 24 ժամյա ռեժիմով: Մանկական բաժանմունքը ապահովված է մշտական սառը և տաք ջրով:

Ընկերությունում հիվանդանոցային պայմաններու բուժօգնություն ստացող բուժառուները սնվում են տեղում՝ օրական երեք անգամ:

Ընկերությունում բոլոր հիվանդանոցային բաժանմունքներում առկա են սանհանգույցներ և լոգարաններ՝ ըստ նշանակության (ընդհանուր և անհատական):


Պետք է նշել, որ աշխատանքներ են տարվում ընկերության շենքային պայմանների բարելավման ուղղությամբ և որի արդյունքում արդեն իսկ ունենք վերանորոգված ու կահավորված բաժանմունքներ, որոնք համապատասխանում են գործող սանիտարական կանոններին ու նորմերին:

Նշեմ նաև, որ դեռևս կան բաժանմունքներ որոնք նույնպես գտնվում են անմխիթար վիճակում և ենթակա են վերանորոգման: Այդ կապակցությամբ, նախապատրաստվել է շենքի մի մասի կապիտալ վերանորոգման աշխատանքների աշխատանքային նախագիծ, որը իր մեջ ներառում է վարչական մասնաշենքի առաջին հարկի, գլխավոր մասնաշենքի կիսանկողային հարկի և երրորդ հարկում տեղակայված երկրորդ (կանանց) բաժանմունքի մասնակի կապիտալ վերանորոգման աշխատանքները:

Ընթացքի մեջ են նաև գլխավոր մասնաշենքի չվերանորոգված մասի կապիտալ վերանորոգման, ինչպես նաև զբաղեցրած տարածքի (1,5 հա) բարեկարգման նախագծման աշխատանքները:

Ուումնասիրելով ներկայացված զեկույցը, հետագայում կտարվեն համապատասխան հետևողական աշխատանքներ՝ ի հայտ եկած թերությունները վերացնելու և համապատասխան պահանջները ապահովելու ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ



ԱՐԱ ԵՐԵՄՅԱՆ

«Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
„ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ՀԱՅՐԻՅԱՆԻ ԱՆՎ.
ԱՐՄԱՇԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ,, ՓԲԸ



РА АРАРАТСКОЕ ГУБЕРНАТОРСТВО
ЗАО „АРМАШСКИЙ ЦЕНТР ЗДОРОВЬЯ
ИМ. АКАДЕМИКА А. АЙРИЯНА,,

0624 ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ,
Հեռ. (0234) 6-21-93

0624 РА, Араратская область с.Армаш
Тел. (0234) 6-21-93

N69 / 15.07.2024թ

ՀՀ ԱՌՈՂՋԱԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան Ձեր 10.07.2024թ-ի N ՎԳ/02.1/20240-2024 գրության, ներկայացնում ենք կարծիք, հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների նկատմամբ հասարակական դիտորդների խմբի նախագահ Ա. Սաքունցի կողմից ներկայացված „ ՀՀ հոգեբուժական հաստատություններում անձնական հիգիենայի ապահովումը „ զեկույցի նախագծի վերաբերյալ:

„Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ը զեկույցում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Կառուցվել է առանձին լվացքատուն, իր սանհանգույցով և լոգարանով
- Ձեռք է բերվել բարձրորակ ավտոմատ լվացքի մեքենաներ՝ 2 հատ :Արդյունքում լվացքատանը գործում է 4 ավտոմատ լվացքի մեքենա, ինչը հնարավորություն կտա անհատականեցնելու հազուստը, ներքնազգեստները, անկողնային պարագաները:
- Խոհանոցում սանիտարազիզենիկ կանոնների պատշաճ պահպանման նպատակով ձեռք է բերվել ևս մեկ սպասք լվացող մեքենա:
- Կողպահարանների և պահարանների ձեռքբերման համար կազմակերպվել է գնման մրցույթ: Առաջիկա ամսում ձեռք կբերվի մահճակալների թվին

համապատասխան կողպելու հնարավորություն ունեցող կողապահարաններ և պահարաններ, ինչը հնարավորություն կտա անհատականեցնելու հագուստը, ներքնագգեստները, անկողնային պարագաները և հիգիենայի պարագաները:

„Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ում բուժում և խնամք ստացող պացիենտներին հիգենիայի պարագաներով ապահովելու համար իրականացվում է գնման ընթացակարգեր համաձայն ՀՀ „ Գնումների մասին,, օրենքի, իսկ չափաբաժինները կանոնակարգվում է ՀՀ կառավարության 21.հոկտեմբերի.2021թ-ի N 1724-Ն որոշմամբ:

„Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ-ում արձանագրված թերությունները և բացթողումները առաջացել են 2022-2023թթ ֆինանսավորման կրճատման պատճառով: 2024թ-ին աշխատանքներ են տարվում արձանագրված թերությունների շտկման համար:



Տնօրեն

Լևոն Հայրիյան

ԽՄՔԻ ՄԱՍԻՆ

Հոգեբուժական կազմակերպություններում դիտորդական խումբը (այսուհետ՝ Դիտորդական խումբ) գործում է համաձայն «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի հոդված 29-ի՝ հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկումը: Դիտորդական խմբի գործունեության կարգը սահմանվում է «Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկում իրականացնող դիտորդների խումբ ստեղծելու, խմբի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու, առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 3757 - Ա և 2019 թվականի հունվարի 15-ի N 77 - Ա հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի 3496 - Ա հրամանով:

Դիտորդական խումբը գործում է հասարակական հիմունքներով: Դիտորդական խմբի իրավասությունը տարածվում է ինչպես ՀՀ առողջապահության նախարարության, այնպես էլ ՀՀ մարզպետարանների ենթակայությամբ գործող հոգեբուժական հաստատությունների նկատմամբ:

Դիտորդական խմբի հիմնական նպատակներն են՝

- կազմակերպություններում մարդու իրավունքների մշտադիտարկումների իրականացումը, անձանց խախտված իրավունքների վերականգնմանը և դրանց կանխարգելմանը աջակցությունը,
- հոգեկան առողջության բնագավառը կանոնակարգող իրավական ակտերի ուսումնասիրությունը և ըստ անհրաժեշտության ներպետական օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր մշակելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- հոգեկան առողջության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակային վերլուծությունների, եզրակացությունների

և առաջարկությունների ներկայացումը ՀՀ առողջապահության
նախարարություն, ինչպես նաև հանրությանը:

Մշտադիտարկումներ իրականացնելու նպատակով Դիտորդական խումբը կատարում է պլանային և ոչ պլանային այցեր, որոնք կատարվում են առանց նախազգուշացման: Դիտորդական խմբի անդամներն իրավունք ունեն մուտք գործել կազմակերպության ցանկացած տարածք, ունենալ առանձնազրույց և ծանոթանալ ներքին փաստաթղթերի բովանդակությանը՝ գործունեության կարգը հաստատող հրամանով և օրենքով սահմանված կարգով: